ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

___ « _____ » 2025թ. N __ -Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի N 95-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի «Երևան համայնքում 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման դեպքում երթուղիների սպասարկման փոխադրավարձը սահմանելու մասին» N 95-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները.

1) Որոշման 1-ին կետի 12. 1-ին ենթակետից հետո լրացնել նոր 12. 2-րդ ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«12.2) «Մեկ ուղևորություն» ֆիզիկական կամ էլեկտրոնային տոմս ձեռք բերելու դեպքում՝ ձեռքբերման պահից 3 օրվա ընթացքում 1 ուղևորություն կատարելու հնարավորությամբ՝ 150 դրամ.».

2) Որոշման 2-րդ կետից հետո լրացնել նոր 2. 1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Սահմանել, որ 2025 թվականի հունվարի 1-ից 2025 թվականի փետրվարի 28-ը ներառյալ սույն որոշման 1-ին կետի՝

1) 1-ին ենթակետից մինչև 3-րդ ենթակետում նշված «30 օր» ֆիզիկական քարտ տոմս կամ էլեկտրոնային տոմս ձեռք բերելու դեպքում, նույն ենթակետերով նախատեսված պայմաններով՝ անսահմանափակ քանակով ուղևորությունները կարող են կատարվել ակտիվացման պահից 60 օրվա ընթացքում.

2) 3-րդ ենթակետից մինչև 5-րդ ենթակետում, բացառությամբ 3.5-րդ և 4.5-րդ ենթակետերի, նշված «90 օր» ֆիզիկական քարտ տոմս կամ էլեկտրոնային տոմս ձեռք բերելու դեպքում, նույն ենթակետերով նախատեսված պայմաններով՝ անսահմանափակ քանակով ուղևորությունները կարող են կատարվել ակտիվացման պահից 120 օրվա ընթացքում.

3) 5-րդ ենթակետից մինչև 7-րդ ենթակետում, բացառությամբ 5. 5-րդ և 6. 5-րդ ենթակետերի, նշված «365 օր» ֆիզիկական քարտ տոմս կամ էլեկտրոնային տոմս ձեռք բերելու դեպքում, նույն ենթակետերով նախատեսված պայմաններով՝ անսահմանափակ քանակով ուղևորությունները կարող են կատարվել ակտիվացման պահից 395 օրվա ընթացքում:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2025 թվականի փետրվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա: Սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով լրացվող նոր 12. 2-րդ ենթակետի դրույթները գործում են մինչև 2026 թվականի հունվարի 1-ը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի N 95-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Ընթացիկ իրավիճակը, իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

Երևան քաղաքի ավագանու կողմից 2024 թվականի մարտի 12-ին հաստատվել է «Երևան համայնքում 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման դեպքում երթուղիների սպասարկման փոխադրավարձը սահմանելու մասին» N 95-Ն որոշումը:

Երևան քաղաքում ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման որակը բարձրացնելու նպատակով ձեռնարկվում են մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝ Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի իրականացվող բարեփոխումների շրջանակներում Երևան քաղաքը ձեռք է բերում հասարակական տրանսպորտի անհրաժեշտ շարժակազմ՝ գործող երթուղային ցանցում առկա իրավիճակը կարգավորելու և նոր երթուղային ցանցին անցում կատարելու համար: Նշված շարժակազմի ձեռք բերումը անհրաժեշտ է առկա հնամաշ տրանսպորտային միջոցների փոխարինման, արդյունավետ, անվտանգ և հարմարավետ ուղևորափոխադրում իրականացնելու համար: Երևան քաղաքում հասարակական տրանսպորտի փուլային ձևով իրականացվող բարեփոխումների շրջանակներում կարևորվում է ոչ միայն հասարակական տրանսպորտի փոխարինմանն ուղղված քայլերի ձեռնարկումը, այլ դրան զուգընթաց՝ հասարակական տրանսպորտի սպասարկմանն ուղղված բարեփոխումների ամբողջական ծրագրի իրականացումը, այն է՝ միասնական տոմսային համակարգի ներդրումը:

Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N 95-Ն որոշմամբ հաստատվել են Երևան համայնքում 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման դեպքում երթուղիների սպասարկման փոխադրավարձեր՝ միասնական տոմսային համակարգի ներդրմամբ:

Բնակչության կողմից տոմսային միասնական համակարգին անցումը կատարելու և համակարգի անցումը սահուն ապահովելու նպատակով՝ նախագծով նախատեսվում է

փոխադրավարձի նոր սակագին՝ «Մեկ ուղևորություն» ֆիզիկական կամ էլեկտրոնային տոմս ձեռք բերելու դեպքում՝ ձեռքբերման պահից 3 օրվա ընթացքում 1 ուղևորություն կատարելու հնարավորությամբ՝ 150 դրամ.»:

Միևնույն ժամանակ, Նախագծով նախատեսվում է, որ Սահմանել, որ 2025 թվականի հունվարի 1-ից 2025 թվականի փետրվարի 28-ը ներառյալ նույն որոշման 1-ին կետի՝

1) 1-ին ենթակետից մինչև 3-րդ ենթակետում նշված «30 օր» ֆիզիկական քարտ տոմս կամ էլեկտրոնային տոմս ձեռք բերելու դեպքում, նույն ենթակետերով նախատեսված պայմաններով՝ անսահմանափակ քանակով ուղևորությունները կարող են կատարվել ակտիվացման պահից 60 օրվա ընթացքում.

2) 3-րդ ենթակետից մինչև 5-րդ ենթակետում, բացառությամբ 3. 5-րդ և 4. 5-րդ ենթակետերի, նշված «90 օր» ֆիզիկական քարտ տոմս կամ էլեկտրոնային տոմս ձեռք բերելու դեպքում, նույն ենթակետերով նախատեսված պայմաններով՝ անսահմանափակ քանակով ուղևորությունները կարող են կատարվել ակտիվացման պահից 120 օրվա ընթացքում.

3) 5-րդ ենթակետից մինչև 7-րդ ենթակետում, բացառությամբ 5. 5-րդ և 6. 5-րդ ենթակետերի, նշված «365 օր» ֆիզիկական քարտ տոմս կամ էլեկտրոնային տոմս ձեռք բերելու դեպքում, նույն ենթակետերով նախատեսված պայմաններով՝ անսահմանափակ քանակով ուղևորությունները կարող են կատարվել ակտիվացման պահից 395 օրվա ընթացքում:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կարգավորումներն ուղղված են տոմսային միասնական համակարգին անցումը կատարելու ապահովմանը՝ նախագծով նախատեսվում է, որ Նախագծով լրացվող 12.2-րդ ենթակետի դրույթները գործելու են մինչև 2026 թվականի հունվարի 1-ը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ